Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մոդուլային դասերի առանձնահատկությունները պատմության դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Ալվարդ Պետրոսյան

Բովանդակություն

1.Ներածություն..... 3

2.Գլուխ 1 4

3.Գլուխ 2 5-9

4.Եզրակացություն 10

5.Գրականության ցանկ 11

Ներածություն

Հետազոտության նպատակն է՝ մոդուլային ուսուցման օրինակով բացահայտել և հիմնավորել սովորողների ուսուցման ապահովման տեսանկյունից կիրառելի արդյունավետ տեխնոլոգիական գործոնների կարևորությունը:

Հետազոտության հիմնական նպատակն է՝

- Ուսումնասիրության միջոցով վեր հանել մոդուլային տեխնոլոգիայի ազդեցությունը դասավանդվող նյութի յուրացման որակի վրա:
- Հիմնավորել մոդուլային ուսուցման առանձնահատկությունները:
- Նկարագրել մոդուլային դասերի կազմակերպման մեթոդական համակարգը:
- Հիմնավորել սովորողների ճանաչողական գործունեության կարևորությունը:

Մոդուլային դասընթացի նպատակը սովորողի մոտ ինքնազարգացման հմտություններ ստեղծելն է, և այդ ամբողջ գործընթացը հիմնված է առաջնային՝ գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորման ու զարգացման և երկրորդային՝ երկարաժամկետ անհատական կարողությունների զարգացման արդյունքների գիտակցված ընտրության վրա:

Գլուխ 1

Պատմության դասավանդման ընթացքում խնդիրներ են առաջանում ինչպես ուսումնական նյութը մատուցելու, այնպես էլ սովորողների մոտ ինքնուրույն աշխատանք կատարելու հմտություններ ձևավորելու հարցում:Երեխաները ևս խնդրի առաջ են կանգնում, երբ իրենց հանձնարարվում է աշխատանք, որը իրենք պետք է կատարեն ինքնուրույն:Սկզբնական շրջանում փորձելով կիրառել այս մեթոդը բախվել եմ խնդիրների, քանի որ երեխաները ևս պատրաստ չէին կատարել աշխատանքը:Դասավանդելով 5-9-րդ դասարաններում բազմիցս փորձել եմ կիրառել մեթոդներ և տարաբնույթ աշխատանքներ, փորձելով ավելի շատ ներգրավել երեխաներին, սակայն բավականին բարդ է,քանի որ տարիքային տարբեր խնբերի հետ է աշխատանքը:Ներկայումս, երբ տեղեկատվությունը դառնում է ռազմավարական ռեսուրս հասարակության զարգացման համար, մյուս կողմից էլ արագորեն կորցնում է իր արդիականությունը՝ պահանջելով մշտական թարմացում տեղեկատվական հասարակության մեջ, ժամանակակից կրթության վերաբերյալ պահանջմունքը՝ որպես շարունակական գործընթաց, դառնում է ակնհայտ: Ուսումնական հաստատությունում դասընթացների արդյունքը պետք է լինի անհրաժեշտ տեղեկատվություն գտնելու ունակությունը և այն օգտագործելու կարողությունը՝ ինքնուրույն գիտելիք ձեռք բերելու համար: Բացի դրանից՝ անհրաժեշտ է աշակերտներին բացատրական ուսուցումից տանել դեպի ակտիվ, ժամանակակից տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառմամբ ուսուցում, որի դեպքում վերջինս կդառնա ուսումնական գործընթացի ակտիվ սուբյեկտ: Ուսուցման ժամանակակից մեթոդները, ինչպես նաև հեռավար ուսուցման մարտահրավերը նոր պահանջներ են առաջադրում արդի ուսուցման գործընթացում:

Գլուխ 2

Դասավանդելով հիմնական դպրոցում և բախվելով տարբեր խնդիրների կապված ուսուցման հետ, որոշեցի դասարաններում կիրառել մոդուլային դասընթացի մեթոդը:



Վերջին տարիներին մանկավարժների շրջանում առավել մեծ հետաքրքրություն է առաջացրել ուսուցման մոդուլային տեխնոլոգիան: Այն հիմնվում է հետևյալ գաղափարի վրա. ուսանողը պետք է սովորի ինքնուրույն, իսկ դասախոսը պարտավոր է ղեկավարել նրա ուսուցման գործընթացը, մոտիվացնել, կազմակերպել, համակարգել, ուղղորդել, կարգավորել, խորհուրդ տալ և վերահսկել: Մոդուլային ուսուցման տեխնոլոգիան ներառում է այն բոլոր առաջադիմական դրույթները, որոնք կուտակվել են մանկավարժության տեսության ու պրակտիկայի մեջ: Այդ ուսուցումը հնարավորություն է ընձեռում, որ սովորողի մոտ ձևավորվի ինքնակրթության հմտություն, նպատակադրման կարողություն, ձևավորվեն ու զարգանան համագործակցային այնպիսի օգտակար հմտություններ, ինչպիսիք են՝ ինքնագնահատումը, ինքնավերահսկումը և փոխադարձ վերահսկումը:

Մոդուլային տեխնոլոգիան ապահովում է նաև ուսուցման անհատականացում՝

ա) ըստ ուսուցման բովանդակության,

բ) ըստ յուրացման տեմպի,

գ) ըստ ինքնուրույնության մակարդակի,

դ) ըստ վերահսկման և ինքնավերահսկման եղանակների:

Մոդուլային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման արդյունքում սովորողը գի- տակցված ու իմաստավորված մոտեցում է հանդես բերում ուսումնական գործընթացի նկատմամբ՝ ուշադրությունը բևեռելով իր գիտելիքների ու կարողությունների ուժեղ ու թույլ կողմերի վրա:Կիրառելով այն իմ դասընթացի ժամանակ,ատացա բավանկանին շատ կատարված աշխատանքներ:Երեխաների մոտ ձևավորվեց ինքնուրույն աշխատանք կատարելու հմտություններ,հետաքրքրասիրություն առարկայի նկատմամբ, նույնիսկ սոցիալական կայքերից սկսեցին առավել արդյունավետ օգտվել:Բացի դրանից դասագրքային նյութերը բավականին քիչ են և չեն ապահովում համապատասխան թեմայի ամբողջական տեղեկատվությունը:Այս կերպ ուսուցիչը հնարավություն ունի յուրաքանչյուր սովորողի հետ առնչվել ավելի շատ, քան ավանդական ուսուցման դեպքում:Պետք է նշել, որ ուսուցման մոդուլային մոտեցումը բավարարում է կրթական տեխնոլոգիաների բոլոր պահանջները, ներառում է ուսուցման նպատակների, բովանդակության և սովորողների ճանաչողական գործունեության կառավարման մեթոդների փոփոխություն:

Ցանկացած մոդուլ կազմված է տեղեկատվական մասից՝ բովանդակությունից, սովորողների համար նախօրոք կազմված առաջադրանքներից և ուղղորդող խորհուրդներից: Սովորողը հնարավորություն ունի ընտրել այն առաջադրանքները, որը իրեն ավելի հետաքրքիր է: Մոդուլային դասերի ընթացքում սովորողնե օգտվում են տարբեր աղբյուրներից,քարտեզներից, գծագրերից և այլն:

Մոդուլային դասերը կարելի է կազմակերպել ինչպես անհատական մոտեցմամբ, այնպես էլ խմբային:

Մոդուլային ուսուցումը իրականացվում է մի քանի փուլերով: Մինչ դասը սկսելը այն պահանջում է պատրաստման գործընթաց, որը բաժանվում է երեք փուլի՝

1.մոդուլային ուսումնական պլանի մշակում

2.առարկաների մոդուլային աշխատանքի ծրագրերի մշակում 3.ուսումնական մոդուլների փաթեթների ստեղծում:

Դասը սկսվում է մուտքային ստուգումից: Իրականավնելով այն՝ ուսուցիչը ստուգում է սովորողների կողմից գիտելիքների յուրացման աստիճանը: Մուտքային ստուգումը հնարավորություն է տալիս տրամաբանորեն անցում կատարելու նոր նյութի ուսումնասիրությանը:

Ուսուցիչը ընթացիկ և միջանկյալ ստուգումը իրականացնում է դժվարությունների և հիմնախնդիրների դուրսբերման նպատակով, որոնք առաջանում են նյութի յուրացման ժամանակ: Այս կերպ նա ղեկավարում է ուսուցման գործընթացը:

Մոդուլային դասերի ժամանակ ընդունված է կատարել ինքնաստուգում և փոխադարձ ստուգում: Այս դեպքում սովորողները համադրում են իրենց պատասխանների տարբերակները պատրաստի պատասխանների հետ և նշանակում են իրենց գնահատականը, փոխադարձ ստուգումը տեղի է ունենում խմբային աշխատանքների ժամանակ:

Դասի ավարտին աշակերտները 10 բալանոց համակարգով գնահատում են դասի ժամանակ իրենց կատարած աշխատանքը և արդյունքը՝ ինչ տվեց այն իրենց:

Այսպիսով՝ սովորողները բացահայտում ու պարզաբանում են, թե ինչի են հասել պատմական նյութը ուսումնասիրելու ընթացքում, ինչ ստացան որպես անհատ և որպես խմբի անդամ:

Այնուհետև սովորողները գնահատում են խմբի աշխատանքը և իրենց դերը դասի ընթացքում: Այս ամենից հետո սովորողները նշում են, թե ինչը նրանց դուրս եկավ:

Մոդուլային դասը սովորողներին հնարավորություն է տալիս դասը յուրացնելու երկու ուսումնական ժամերի ՝ 90 րոպեի ընթացքում: Մոդուլային դասի անցկացման պարտադիր պայման է հանդիսանում յուրաքանչյուր սովորողին տարբեր մոտեցում ցուցաբերելը՝ ելնելով իր անհատական և հոգեբանական առանձնահատկություններից:

Մոդուլային դասընթացները ներառում են դասընթացի բովանդակության հստակ կառուցվածք, տեսական նյութի հետևողական ներկայացում, ուսումնական գործընթացը մեթոդական նյութով ապահովում և գիտելիքների գնահատման և մոնիտորինգի համակարգ, ինչը թույլ է տալիս կարգավորել ուսուցման գործընթացը:

Մոդուլային դասերը ապահովում են ուսուցման փոփոխականություն, հարմարեցում ուսումնական գործընթացը ուսանողների կարողություններին և պահանջներին:

Տեսական նյութի յուրացումը ստուգելու համար սովորաբար կատարվում է թեստավորում կամ գործնական իրավիճակների լուծում: Որպես տնային աշխատանք, սովորողները կարող են կազմել գործնական իրավիճակների իրենց տարբերակները: Յուրաքանչյուր մոդուլի ուսումնասիրությունից հետո սովորողները ստանում են ուսուցչի առաջարկությունները իրենց հետագա աշխատանքի վերաբերյալ: Մոդուլային ուսուցման ժամանակ առավել հաճախ օգտագործվում է աշակերտների գիտելիքների եւ հմտությունների գնահատման վարկանիշային համակարգը, որպես վերահսկողության տեսակներից մեկը:

Մոդուլային ուսուցումը, որը առաջադեմ ուսուցման մոտեցում է, հնարավորություն է տալիս հասնել բարձր արդյունավետության մանկավարժական գործընթացում:

Հնարավոր են մոդուլների ուսուցման գործընթացի ապահովման երեք հիմնական ուղիներ՝

1.այլ մասնագետների կողմից արդեն ստեղծված մոդուլների օգտագործում

2.իրենց մանկավարժների կողմից կազմակերպված մոդուլային ուսուցման ստեղծում

3.արդեն առկա ուսումնական նյութերի փոփոխման և դրանց հիման վրա նոր մոդուլների ձևավորման մեթոդ:

Մոդուլային ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կարելի է ուսումնական գործընթացը ապահովել համակարգչով:

Ուսուցիչը դասը վարելու ընթացքում կարող է օգտագործել մոդուլի նաև այս տեսակները՝

Նոր նյութի ուսումնասիրության մոդուլ: Եթե ուսուցիչը վերցրել է ուսումնական միավորների ընդլայման ուղին, ապա նախընտրելի է դպրոցական դասախոսություն, որը թույլ է տալիս համապարփակորեն փոխանցել նյութի բովանդակությունը սովորողներին: Այնուամենայնիվ, միշտ չէ, որ հնարավոր է տարբերակել ուսումնական միավորները, քանի որ նյութի ընդլայման իմաստը քանակական չէ, այլ որակական: Մինչդեռ միջին և նույնիսկ բարձր դասարանները միշտ չէ, որ պատրաստ են դասախոսություններին:

Մոդուլային դաս անցկացնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

1. Հանգամանալից մշակել յուրաքանչյուր դասի ուսումնական նյութը
2. Առանձնացնել գլխավոր գաղափարները
3. Ձևակերպել սովորողների համար նպատակ, նշել թե դասի ավարտինսովորողը ինչ պետք է իմանա,հասկանա,կարողանա և այլն:
4. Որոշել ուսումնական տարրերի բովանդակություլյնը, ծավալը, հաջորդականությունը, դրանց կատարման ձևերն ու ժամանակը
5. Նախապատրաստել նյութեր, առաջադրանքներ, թեստեր
6. Մշակել՝

Մեթոդական ուղեցույց, որը ներառի ուսուցանվող նյութին վերաբերող որոշակի հարցեր, հանձնարարականներ, ցուցումներ, խորհուրդներ, ստուգման ձևեր ու եղանակներ

Ուսուցանվող նյութի յուրացման ուղեցույց, որում լինեն գիտելիքների յուրացման չափանիշներ, ինքնաստուգման սանդղակներ

Եզրակացություն

Մոդուլային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման արդյունքում սովորողը գիտակցված ու իմաստավորված մոտեցում է հանդես բերում ուսումնական գործընթացի նկատմամբ՝ ուշադրությունը բևեռելով իր գիտելիքների ու կարողությունների ուժեղ ու թույլ կողմերի վրա: Մոդուլային դասերը հատկապես մեր օրերում արդիական են: Անհնար է արդեն դառնում պատկերացնել դասավանդումը առանց մոդուլային դասերի կիրառման: Այն թույլ է տալիս սովորողին աշխատել կոնկրետ նպատակների վրա, և որ ամենակարևորն է աշխատել ինքնուրույն՝ ուսուցչի վերահսկմամբ: Մոդուլային դասերի կիրառումը թույլ է տալիս սովորողի մեջ զարգացնել ինքնակրթման, ինքնաճանաչման, ինքնագնահատման կարողությունները: Ինքնուրույն աշխատանքը խթանում է սովորողների ուսումնական գործունեությանը և թույլ է տալիս բացահայտել իրենց կարողությունները: Սովորողի մոտ ձևավորվում է մոտիվացիա:Նմանատիպ ուսուցման առավելությունը նաև կայանում է նրանում, որ յուրաքանչյուր սովորող գիտի, թե իրենից ինչ է պահանջվում:Պարզ է դառնում, որ մոդուլային ուսուցման հիմնական գաղափարը այն է, որ սովորողը սովորի ինքնուրույն, իսկ ուսուցիչը պետք է միայն ուղղորդիչ դեր ունենա: Մոդուլային դասերի ուսուցման գործընթացում կիրառվում են կրկնության, նոր նյութի ամրապնդման, հանձնարարությունների և մեթոդական այլ հնարներ, որոնք բխում են ուսուցման կազմակերպման ձևերից:

Գրականության ցանկ

1.Պապոյան Հ. , Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, 2013

2.Պետրոսյան Հ., Մանկավարժական բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացի կառավարումը, Երևան 2011

3.Арсеньев Д.Г. Сурыгин А.И., Шевченко Е.В. Современные п одходы кпроектированию и реализации образовательных программ в вузе. 2010.

4.Беспалько В.П. Слагаемые педагогической технологии, 1989.

5.Борисова Н.В. От традиционного через модульное к дистанционному образованию: Учеб.пособие. М. 1999.

6. Дайри Н.Г. Как подготовить урок истории. М. 1969.